ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 22. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը

1. Սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն՝ պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով:

2.1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Կառավարության անդամ նշանակված քաղաքացուն՝ Կառավարության անդամի լիազորությունների ողջ ժամկետով:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը.

2) Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացուն տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս քաղաքացու

առողջական վիճակի փորձաքննությունն իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության ենթակա պահեստազորի սպաների փորձաքննության համար սահմանված կարգով, ինչպես նաև նշված քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

5. Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք ունեցող կամ այդ հիմքով տարկետում ստացած, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

Հոդված 25. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումն ապահովող մարմինները

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվում են հանրապետական և, ըստ մարզերի (Երևան քաղաքի)՝ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ներկայացմամբ:

2. Շարքային կամ պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը՝

1) կազմակերպում է շարքային և պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման գործընթացը.

2) որոշում է կայացնում սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին.

3) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ՝

ա. մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով և 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված հանգամանքների, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացու՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական,

գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ փաստաթղթերը,

բ. իրավասու բժշկական հանձնաժողով է ներկայացնում առողջական խնդիրներ ունեցող շարքային և պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիների նախնական և այլ հետազոտությունները, նրանց առողջական վիճակի վերաբերյալ առկա այլ փաստաթղթեր,

գ. ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության մանդատային հանձնաժողով է ներկայացնում շարքային կազմի քաղաքացիների կողմից տրված ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը կամ սպայական դասընթացներին մասնակցելու դիմումները,

դ. պահեստազորի սպաների զորակոչային մանդատային հանձնաժողով է ներկայացնում սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերով, 24-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերը:

3. Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը՝

1) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

բ. սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին.

2) առաջարկություն է ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ կամ մերժում է նշված հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ քաղաքացու դիմումը:

4. Հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝

1) համակարգում և վերահսկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.

2) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով և 23-րդ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով նախատեսված դեպքերում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

բ. սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով և նույն հոդվածով նախատեսված ժամկետներում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին.

3) եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու նպատակահարմարության վերաբերյալ.

4) քննարկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ ներկայացված բողոքները:

5. Հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ բողոքներ ներկայացնելը՝ մինչև այդ որոշումների (տրված եզրակացությունների) վերանայումը, չի կասեցնում դրանց կատարումը:

6. Հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) որոշումները (տրված եզրակացությունները) դրանց կայացման օրվանից եռօրյա ժամկետում տրվում են քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին: Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները դրանց կայացման օրվանից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

7. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվում է պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողով, որը.

1) համակարգում և վերահսկում է պահեստազորի սպայական կազմի զորակոչի ապահովման ուղղությամբ զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.

2) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին,

բ. սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով, 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

գ. սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին, 23-րդ հոդվածի 5-րդ և 24-րդ հոդվածի 6-րդ մասերով նախատեսված հիմքերով ու նույն հոդվածներով նախատեսված ժամկետներում պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին,

դ. սույն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա սահմանված զորակոչի ենթակա անձանց թվաքանակը սույն կետի «ա» ենթակետի համաձայն լրանալու դեպքում զորակոչին կանչված մնացած քաղաքացիների զորակոչը հետաձգելու մասին.

3) քննարկում է զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության վերաբերյալ տրված բողոքները:

8. Պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովի որոշումը դրա կայացման օրվանից եռօրյա ժամկետում տրվում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին: Պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովի որոշումները դրանց կայացման օրվանից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

9. Սույն հոդվածում նշված զորակոչային և մանդատային հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնում են նիստերի ձևով: Նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների կեսից ավելիի ներկայության դեպքում: Հանձնաժողովի որոշումները (եզրակացությունները) ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

10. Շարքային և պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչերի բժշկական ապահովումն իրականացնում են սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված իրավասու բժշկական հանձնաժողովները, որոնք՝

1) իրականացնում են շարքային կամ պահեստազորի սպայական կազմերի զորակոչերի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտությունները և փորձաքննությունները.

2) փորձաքննական եզրակացություն են տալիս քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ.

3) քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տրված փորձաքննական եզրակացությունները ներկայացնում են հանրապետական զորակոչային կամ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովներ: